



## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

26 հունիսի 2018 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 3/5

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 3-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 5-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 55 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալները, քաղաքապետի գլխավոր խորհրդականը, քաղաքապետի խորհրդականները, Երևան քաղաքի գլխավոր ճարտարապետը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Հաշվի առնելով, որ Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ, Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի ժամանակավոր հանձնաժողովի անդամ Սուրեն Ներսիսյանը բացակայում է, նախքան օրակարգի նախագիծը հաստատելը, համաձայն Երևանի ավագանու կանոնակարգի 100-րդ կետի՝ ժամանակավոր հաշվիչ հանձնաժողովի նոր անդամ նշանակվեց Երևանի ավագանու «Հանրապետական կուսակցություն» խմբակցության անդամ Գրիգոր Մինասյանը:

Նախքան օրակարգի նախագծին անդրադառնալը՝ ելույթներ ունեցան և հարցեր ուղղեցին ավագանու 3 անդամ.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

2. Անի Սամսոնյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

3. Մարինա Խաչատրյան - Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2018 թվականի հունիսի 26-ի նիստի օրակարգի նախագիծը.

1. Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

2. Եվրոպական միության «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը միանալու մասին:

3. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

4. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

5. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

6. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

7. Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

8. Երևան համայնքի սեփականություն համարվող 50 տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից 2017 թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

**1. ԼՍԵՑԻՆ** - Երևանի ավագանու 3-րդ նստաշրջանի 5-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 55 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ` 52, դեմ` 3, ձեռնպահ` 0

**Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ**

**2. ԼՍԵՑԻՆ** - Եվրոպական միության «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը միանալու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Տիգրան Սարգսյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ջեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

2. Անի Սամսոնյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի կապակցությամբ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ.Արեյանը և աշխատակազմի զարգացման և ներդրումային ծրագրերի վարչության պետ Տ. Սարգսյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն.Նահապետյանը տեղեկացրեց, որ «Եվրոպական միության «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը միանալու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Զարուհի Փոստանջյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել է ավագանու 4 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

1. Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

2. Անահիտ Բախշյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

3. Վիկտոր Ենգիբարյան- Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

4. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի խմբակցության ղեկավար Զարուհի Փոստանջյանը:

**ՈՐՈՇՎԵՑ** - Համաձայնություն տալ միանալու Եվրոպական Միության «Համայնքի ղեկավարներ հանուն տնտեսական զարգացման» նախաձեռնությանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 53 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ` 53, դեմ` 0, ձեռնպահ` 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

**3. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ջեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն

անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Զարուհի Փոստանջյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Քանաքեռ ՀԷԿ հ.16 շենքի հ.220՝ 13.9քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 23022015-01-0114 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Հայկասար Մարտիրոսյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 54 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

4. **ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ԶԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Զեկուցողին հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 2 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր ուղղեցին.

1. Անահիտ Բախշյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

2. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

Քննարկվող նախագծի վերաբերյալ գլխադասային հանձնաժողովին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին Երևան համայնքի սեփականությունը համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 շենքի հ.17/1՝ 114.4քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13022018-01-0161 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Մանվել Քարամյանին, Աննա Քարամյանին և Մարիամ Քարամյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 54 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

**5. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականությունը համարվող Դավթաշեն 3-րդ թաղամասի հ.6/2 շենքի հ.17՝ 113.5 քմ մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.13022018-01-0169 վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (սվիրել) Կարեն Հայրապետյանին, Հասմիկ Հայրապետյանին, Վարազդատ Հայրապետյանին և Դավիթ Հայրապետյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 52 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 52, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

**6. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու 1 անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

1. Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Էրեբունի վարչական շրջանի Նոր Արեշ 35-րդ փողոցի հ.127/2 շենքի հ.123՝ 19.76 քմ ընդհանուր մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18052017-01-0209 վկայական) բնակարանը սեփականության իրավունքով անհատույց օտարել (սվիրել) Լիդա Քոչարյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 54 անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

**Որոշումն ընդունվել է միաձայն**

**7. ԼՍԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Արսեն Ամյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարցեր ուղղելու համար ավագանու անդամներ չեն գրանցվել:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող բնակարանն անհատույց օտարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթի համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեց.

**1.** Մարինա Խաչատրյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության անդամ

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Թույլատրել Երևանի քաղաքապետին՝ Երևան համայնքի սեփականություն համարվող Շինարարների փողոցի **հ.8** շենքի **հ.22/1՝ 18.2**քմ և **25.0**քմ /ընդհանուր համատեղ/ ընդհանուր մակերեսով բնակարանը (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման **հ.19012018-01-0163** վկայական) սեփականության իրավունքով անհատույց օտարել (նվիրել) Գայանե Անանյանին:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու **55** անդամ

**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ **55**, դեմ՝ **0**, ձեռնպահ՝ **0**

**Որոշումն ընդունվել է միաձայն**

**8. ԼՄԵՑԻՆ** - Երևան համայնքի սեփականություն համարվող **50** տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից **2017** թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին:

**ՁԵԿՈՒՑԵՑ** - Երևանի քաղաքապետի տեղակալ Վահե Նիկոյանը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ձեկուցողին հարց ուղղելու համար գրանցվել է ավագանու **1** անդամ.

**1.** Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի քաղաքապետի տեղակալ Վ. Նիկոյանը:

Երևանի քաղաքապետի կողմից նշանակված գլխադասային հանձնաժողովի նախագահ Ն. Նահապետյանը տեղեկացրեց, որ «Երևան համայնքի սեփականություն համարվող **50** տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից **2017** թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

**ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՑԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ** - Ելույթների համար գրանցվել են ավագանու **3** անդամ.

Քննարկվող նախագծի վերաբերյալ արտահայտվեցին.

**1.** Անի Սամսոնյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության անդամ

**2.** Դավիթ Խաժակյան-Երևանի ավագանու «ԵԼՔ» խմբակցության ղեկավար

**3.** Զարուհի Փոստանջյան-Երևանի ավագանու «Երկիր Ծիրանի» խմբակցության ղեկավար

«Երևան համայնքի սեփականություն համարվող **50** տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների կողմից **2017** թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը հաստատելու մասին» ավագանու իրավական ակտի նախագծի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեց Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Կ. Արեյանը:

**ՈՐՈՇՎԵՑ – 1.** Հաստատել Երևան համայնքի սեփականություն համարվող **50** տոկոսից ավելի բաժնեմաս ունեցող փակ բաժնետիրական ընկերությունների **2017** թվականի տարեկան գործունեության արդյունքներով առաջացած զուտ շահույթի բաշխման ուղղությունները և Երևանի բյուջե վճարման ենթակա շահութաբաժինների չափերը՝ համաձայն հավելվածի:

**2.** Սահմանել, որ սույն որոշման հավելվածում նշված կազմակերպությունների կողմից շահութաբաժինների վճարումները Երևանի բյուջե կատարվում են եռամսյա ժամկետում (ամսական հավասար չափերով), բայց ոչ ուշ, քան մինչև հոկտեմբերի **1**-ը:

**ԳՐԱՆՑՈՒՄ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ** – ավագանու 52 անդամ  
**ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ** – կողմ՝ 38, դեմ՝ 14, ձեռնպահ՝ 0  
**Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ**

Համաձայն «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի՝ որոշվեց Երևանի ավագանու 4-րդ նստաշրջանի 1-ին նիստը գումարել ս.թ. սեպտեմբերի երկրորդ երեքշաբթի օրը, ժամը 11.00-ին:

**ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ  
ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ**

**Կ.ԱՐԵՅԱՆ**